ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. N ----- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՈՐ ԱՂԲԱՎԱՅՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 34-35-րդ, 42-րդ և 67-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 10,565,000 (տասը միլիոն հինգ հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 10,560,000 (տասը միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 1056 (մեկ հազար հիսունվեց) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 88.610.000 (ութսունութ միլիոն վեց հարյուր տասը հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 8861 (ութ հազար ութ հարյուր վաթսունմեկ) հատ 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված

Կազմված է ----- --------2025թ.
և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ _____

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Հայաստանի Հանրապետության
Երևան քաղաքի ավագանու
« » 2025թ.
N -Ա որոշմամբ

Երևանի քաղաքապետ՝

Տ. ԱՎԻՆՅԱՆ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 18.12.2015 թ.,
գրանցման N278.120.882437

վկայական N03 Ա 1032437

ՀՎՀՀ 00468324

18.12.2015թ. գրանցված կանոնադրության
թիվ ____.___ փոփոխությունը գրանցված է
ՀՀ արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից

_____

“____”_____ 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՈՐ ԱՂԲԱՎԱՅՐ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(փոփոխություն)

2025թ.

Ընկերության կանոնադրության 4.2. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 88,610,000 (ութսունութ միլիոն վեց հարյուր տասը հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 8861 (ութ հազար ութ հարյուր վաթսունմեկ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ:

Բոլոր 8861 բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Երևան համայնքին»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության՝ 18.12.2015թ. պետական ռեգիստրում գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՈՐ ԱՂԲԱՎԱՅՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով, այն է՝ Երևանի ենթակայության կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունները հաստատում է Երևանի ավագանին:

Երևանի քաղաքի ավագանու՝ 2023 թվականի դեկտեմբերի 26-ի հ.48-Ն և Երևանի քաղաքապետի՝ 2024 թվականի հունվարի 18-ի հ.161-Ա որոշումներով հաստատվել է Երևան քաղաքի 2024թ. բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ին հատկացվելիք գումարի չափը՝ 11,800,000 ՀՀ դրամ, որի դիմաց՝ որպես կանոնադրական կապիտալի ներդրում, փաստացի հատկացվել է 10,565,000 ՀՀ դրամ:

Նշված գումարի սահմաններում տեղաբաշխվել է լրացուցիչ 1056 հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը՝ 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, ինչի արդյունքում կանոնադրական կապիտալն ավելանում է 10,560,000 ՀՀ դրամով:

Հատկացված գումարի չափով կանոնադրական կապիտալի ավելացումը բխում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 42-րդ հոդվածի պահանջներից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ